# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N S4002

Պետության կարիքների համար «ԱրմենՏել» ՓԲԸ կողմից բաժանորդին մատուցվող հեռախոսակապի ծառայությունների մատուցման պետական գնման

ք. Երևան /02/ հուլիս /2013 թ./

Հեռահաղորդակցության օպերատոր «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գործում է համաձայն իրեն տրամադրված թիվ 60 արտոնագրի (լիցենզիայի), այսուհետ՝ «Օպերատոր»

ք. Երևան, ՇԿԲ ԿՏ ԿՎՁԾ Խոշոր բիզնեսի հետ աշխատող բաժին

(նշել մարզը, համայնքը, քաղաքը)

ի դեմս լիազորված անձ՝ Խոշոր բիզնեսի հետ աշխատող բաժնի ղեկավար՝ Գոռ Ջատիկյանի

(անուն, ազգանուն, պաշտոնը)

մի կողմից, և մյուս կողմից «Բաժանորդ» ի դեմս ՀՀ ՏԿՆ Ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ ԴԿՎ ՀՄ, աշխատակազմի ղեկավար՝ Միեր Մկրտումյան

(պաշտոնը, անուն, ազգանուն)

ք. Երևան, Վարդանանց 13ա

( իրավաբանական անձի հասցեն, )

---

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն Պայմանագրով «Օպերատորը» պարտավորվում է "Բաժանորդին" մատուցել սույն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ով սահմանված էլեկտրոնային հաղորդակցության ֆիքսված հեռախոսային կապի ծառայություններ, իսկ «Բաժանորդը» պարտավորվում է Օպերատորին վճարել մատուցված էլեկտրոնային հաղորդակցության ֆիքսված հեռախոսային կապի ծառայությունների համար սույն պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

1.2. Բաժանորդին էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունները մատուցվում են կողմերի միջև երկկողմանի համաձայնեցված և ստորագրված առանձին փաստաթղթերում (հավելված 4) ամրագրված Բաժանորդին հատկացված հեռախոսագծերով, հեռախոսի համարներով, կապուղիներով, միացնող գծերով, ուղիղ գծերով, ISDN ցանցային տերմինալով՝ NETMOD սարքավորում, CDMA համակարգով հեռախոսագծի բաժանորդային տերմինալով, անտենայի և այլ կապի միջոցներով:

## 2. Պայմանագրի գինը, վճարման կարգը և ժամկետները

2.1 Սույն պայմանագրի համաձայն Օպերատորի կողմից Բաժանորդին վճարման ենթակա գումարը /պայմանագրի գինը/ կազմված է.

- Բաժանորդային վճարից՝ 1 694 400 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) տարեկան, որը հաշվարկվում և վճարվում է ամսական կտրվածքով՝ փաստացի մատուցված ծառայությունների վճարի հետ միաժամանակ, և
- Փաստացի մատուցված էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների վճարից, որը հաշվարկվում ամսական կտրվածքով՝ համաձայն սույն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ում ամրագրված գնացուցակի (նշված գները ներառում են ԱԱՀ):

2.2. Օպերատորն էլեկտրոնային փոստով Բաժանորդին է ներկայացնում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 2-ով և 3-ով ամրագրված օրինակելի ձևերի համապատասխան կազմված հանձնման-ընդունման արձանագրություն և հաշիվ Հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-րդ օրվանից սկսած, սակայն ոչ ուշ, քան 25-ը: Տվյալ տարվա դեկտեմբերի ամսվա գումարը Բաժանորդը տրամադրում է որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է, արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

Եթե Օպերատորը Բաժանորդին մատուցում է նաև այլ պայմանագրերով սահմանված էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ, ապա Օպերատորը կարող է Բաժանորդին ներկայացնել բոլոր մատուցված ծառայությունների գծով մեկ միասնական հանձնման-ընդունման արձանագրություն, ինչպես նաև մեկ միասնական հաշիվ՝ կից ըստ պայմանագրերի առանձնացված հաշիվներով:

Վճարման ենթակա գումարի մասին տեղեկատվություն Բաժանորդը կարող է ստանալ այդ նպատակով առանձնացված հեռախոսահամարներով:

Հետագայում, տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում բաժանորդին հաշիվները կարող են տրամադրվել նաև այլ եղանակներով:

2.3. Բաժանորդը Բաժանորդային վճարն ու մատուցված ծառայության արժեքը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Օպերատորի հաշվարկային հաշիվ փոխանցելու միջոցով: Վճարումը համարվում է կատարված դրամական միջոցները Օպերատորի հաշվեհամարին մուտքագրվելու պահից:

2.4. «Օպերատորի» կողմից Բաժանորդի բաժանորդային վճարը և մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց հաշվարկված գումարները «Բաժանորդը» պարտավոր է վճարել մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա

վերջին օրը ներառյալ, բացառությամբ դեկտեմբեր ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների համար վճարման ենթակա գումարների, որը վճարվում է տվյալ տարվա դեկտեմբեր ամսին:

2.5. Մատուցված ծառայությունների ծավալը որոշվում է Օպերատորի բիլինգային համակարգի գրանցումների հիման վրա: Նշված գրանցումները/տվյալները հանդիսանում են Բաժանորդին մատուցված ծառայությունների և դրանց ծավալների մասին անվիճելի ապացույց:

## 3. «Օպերատորի» պարտականությունները և իրավունքները

3.1 «Օպերատորը» պարտավոր է՝

3.1.1 Նպատակով գործող տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորություններից ապահովել կայուն և անխափան հեռախոսակապի ծառայություններ:

3.1.2 Իր ցանցի սահմաններում ապահովել հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը:

3.1.3 Սեփական նախաձեռնությամբ կամ «Բաժանորդի» հայտով վերացնել առաջացած կայանային և գծակարգային վնասվածքները Հեռախոսակապի ծառայությունների մատուցման Կանոններով սահմանված ժամկետներում:

3.1.4 Ոչ «Բաժանորդի» մեղքով հեռախոսագծերի վնասվածքների, հեռախոսակայանում տեղի ունեցած վթարների դեպքերում անբավարար խափանման օրը, ժամը և այն վերականգնել Հեռախոսակապի ծառայությունների մատուցման կանոններով սահմանված ժամկետներում:

3.1.5 Ապահովել ՀԾԿՀ կողմից կարգավորման ենթակա հեռախոսակապի ծառայությունների սակագների բարձրացման մասին հրապարակային տեղեկատվությունը Հեռախոսակապի ծառայությունների մատուցման կանոններով սահմանված ժամկետներում, իսկ այդ սակագների նվազեցման մասին` ոչ ուշ, քան նոր սակագների ներդրումից 1 օր առաջ:

Այս դրույթը կիրառելու պարտավորությունից «Օպերատորը» ազատվում է, երբ համապատասխան իրավական ակտի պաշտոնական հրապարակման օրվանից հետո սակագների բարձրացման մասին հրապարակային տեղեկատվության ապահովման ժամկետի պահպանումը հնարավոր չէ:

3.1.6 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.2 «Օպերատորը» իրավունք ունի՝

3.2.1 Անջատել Բաժանորդային հեռախոսագիծը (գծերը), հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ Օպերատորի կողմից մատուցված հեռախոսակապի ծառայություններից չանկացածի դիմաց վճարումները չկատարելու կամ սույն պայմանագրի պայմանները խախտելու կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում: Հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող 2-րդ ամսվա ընթացքում հեռախոսակապի ծառայությունների առկա պարտքերի մարման դեպքում անջատված հեռախոսագծերը ենթակա են վերամիացման:

3.2.2. Հանել սույն պայմանագրի 3.2.1կետով սահմանված ժամկետում անջատված հեռախոսագծերը, հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող 2-րդ ամսվա մինչև վերջին օրը ներառյալ հեռախոսակապի ծառայությունների դիմաց պարտքերը չվճարելու դեպքում և դադարեցնել պայմանագրի գործողությունը՝ հանման օրվանից սկսած երկու ամսվա ընթացքում պահպանելով տեխնիկական տվյալները և վերականգնման հնարավորությունը:

3.2.3. Հեռախոսահամարի հանման օրվանից 2 (երկու) ամսվա ընթացքում, «Բաժանորդի» կողմից պարտքերը չմարելու և վերականգնման միանվագ ծառայության վարձը չմուծելու դեպքում, հեռախոսակապի ծառայությունների մատուցումը (նոր տեղադրում) իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ հեռախոսակապի ծառայությունների դիմաց նախկին պարտքերը մարելու պայմանով:

3.2.4 Մինչև պայմանագրի դադարեցումը հաշվարկել և գանձել բաժանորդային վարձը:

3.2.5 Անմիջապես անջատել բաժանորդային հեռախոսահամարը (գծերը) և լուծել սույն պայմանագիրը, երբ

- Բաժանորդին» տրամադրված հեռախոսագիծը (գծերը), առանց լիազորված մարմնի լիցենզիայի և առանց «Օպերատորի» հետ նախնական գրավոր համաձայնեցման օգտագործվում է շահույթ ստանալու նպատակով կամ
- Բաժանորդին» տրամադրված հեռախոսագիծը (գծերը), առանց «Օպերատորի» հետ նախնական գրավոր համաձայնեցման տրամադրվել են այլ անձի,
- Բաժանորդը հանրային հեռախոսացանցին է միացրել չսերտիֆիկացված վերջնակետային սարքավորում կամ այնպիսի վերջնակետային սարքավորում, որը համատեղելի չէ կամ միջամտում է հանրային հեռախոսացանցի աշխատանքին կամ հեռախոսակապի ծառայություններից օգտվելու՝ ուրիշների հնարավորությանը
- «Օպերատորի» քննարկմանն է ներկայացվել սույն պայմանագրով հեռախոսաֆիկացված տարածքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի հայտը՝ այդ տարածքում հեռախոսային գիծ տեղադրելու վերաբերյալ, երբ «Բաժանորդին» այդ իրավունքները չեն պատկանում:

3.3.6 Բաժանորդից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Բաժանորդի կողմից սույն Պայմանագրի 2.4 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

## 4. «Բաժանորդի» պարտականությունները և իրավունքները

4.1. «Բաժանորդը» պարտավոր է՝

4.1.1 Մատուցված հեռախոսակապի ծառայությունների համար վճարումները կատարել լրիվ ծավալով, յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ, իսկ դեկտեմբեր ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25 ը:

4.1.2. «Օպերատորին» տեղեկացնել բաժանորդային սարքավորման տեսակի (ձևի) մասին և դրանք պահպանել սարքին վիճակում․

4.1.3 Զուգահեռ սխեմայով հեռախոսակապից օգտվելիս նույն բաժանորդային գծի օգտագործող Բաժանորդի համար չստեղծել բարդություններ:

4.1.4. Կապի որոշ ծառայություններից (VAS) օգտվելու դեպքում ծառայությունների օգտագործման հատուկ պայմանների մասին Բաժանորդը կարող է տեղեկացվել կապը սկսվելու պահին: Կապի շարունակելուն ուղղված Բաժանորդի հետագա գործողությունները համարվում են տվյալ պայմանների ընդունելու՝ վերջինիս անվերապահ համաձայնություն: Ծառայությունների մատուցման պայմանների հետ համաձայն չլինելու դեպքում Բաժանորդը պետք է դադարեցնի կապը:

4.1.5. Պայմանագրում նշված հեռախոսաֆիկացված տարածքի նկատմամբ իրավունք ունեցող անձի (քաղաքացի կամ կազմակերպության) փոփոխության, կամ բաժանորդի անվան, անձնագրային տվյալների, բնակության, գտնվելու վայրի և այլ փոփոխությունների դեպքերում գրավոր տեղյակ պահել «Օպերատորին» նման փոփոխությունները ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 30-օրյա ժամկետում՝ պայմանագիրը վերաձևակերպելու համար: Բաժանորդ-իրավաբանական անձը պարտավորվում է տեղեկացնել Օպերատորին՝ իր հանդեպ սնանկության վարույթ հարուցելու կամ իրավաբանական անձի կամավոր լուծարման մասին որոշում կայացնելու վերաբերյալ՝ նշված հանգամանքների մասին հայտնի դառնալու օրվանից սկսած՝ 3 օրացուցային օրվա ընթացքում:

4.1.6. Վճարել մատուցված հեռախոսակապի ծառայությունների համար նաև այն դեպքում, երբ բաժանորդային (վերջնային) սարքավորումը օգտագործվել է այլ անձանց կողմից, անկախ այն բանից համաձայնեցվել է «Բաժանորդի» հետ, թե ոչ:

4.1.7. ISDN գծերով, CDMA հեռախոսագծերով մատուցվող ծառայություններից հրաժարվելու կամ «Օպերատորի» նախաձեռնությամբ հեռախոսակապի ծառայությունների մատուցման պայմանագրի դադարեցման դեպքերում սարքին վիճակում ետ վերադարձնել «Օպերատորի» սեփականություն հանդիսացող ցանցային տերմինալ NETMOD սարքավորումը (ներ) CDMA համակարգով հեռախոսագծի բաժանորդային տերմինալը, անտենան կամ «Օպերատորի» սեփականություն հանդիսացող կապի այլ միջոցները:

4.1.8. Չփոխանցել սույն պայմանագրի 1-ին բաժնում նշված կապի միջոցները այլ անձանց (վարձակալության, ենթավարձակալության պայմանագրերով):

4.19. Կատարել ՀՀ օրենսդրության և սույն պայմանագրի պահանջները:

**4.2 «Բաժանորդն» իրավունք ունի՝**

4.2.1 Օգտվել ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով հեռախոսակապի ծառայությունների ոլորտում սահմանված արտոնություններից:

4.2.2 ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պահանջել հեռախոսակապի ծառայությունների վճարման վերահաշվարկ կամ այդ ծառայություններից հետագայում չօգտվելու դեպքում վճարված դրամական միջոցների վերադարձ:

4.2.3 Ծառայությունների մատուցման ընթացքում «Օպերատորի» մեղքով առաջացած թերություններ հայտնաբերելիս պահանջել հեռախոսակապի ծառայությունների խախտումների անհապաղ վերացում:

4.2.4. «Բաժանորդն» ունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

## 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. «Օպերատորը» օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում «Բաժանորդի» հանդեպ պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, հեռախոսակապի խափանումները վերացնելու ժամկետները խախտելու համար:

5.2.Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում «Օպերատոր»-ից գանձվում է տուգանք՝ խախտում կատարելու ամսվա դրությամբ պայմանագրի գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում «Օպերատոր»-ից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ խախտում կատարելու ամսվա դրությամբ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.5. Բաժանորդի կողմից սույն պայմանագրի 2.4 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Բաժանորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.5. Բաժանորդը պատասխանատվություն է կրում իր մեղքով ցանցային տերմինալ NETMOD սարքավորման, CDMA համակարգով հեռախոսագծի բաժանորդային տերմինալի, անտենայի կամ Օպերատորի սեփականություն հանդիսացող այլ սարքավորումները վնասելու կամ կորստի դեպքում՝ դրա արժեքի չափով՝ հաշվի առնելով մաշվածությունը:

5.6.«Օպերատորը» պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրի 3.1.5 կետով սահմանված ժամկետների խախտման համար, երբ դրա կատարման անհնարինությունն առաջացել է ոչ իր մեղքով:

5.7.Կողմերը պատասխանատվություն չեն կրում պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար երբ դրանք հետևանք են անհաղթահարելի հանգամանքների (բնական աղետներ, պատերազմներ, ՀՀ նախագահի հրամանագրեր և ՀՀ կառավարության որոշումներ և այլն): Նման դեպքերից որևէ մեկի վրա հասնելու դեպքում, Կողմերն այդ մասին պետք է անմիջապես տեղեկացնեն միմյանց: Երբ անհաղթահարելի հանգամանքների ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավել, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը այդ մասին ծանուցելով մյուս կողմին:

5.8. «Օպերատորը» պատասխանատվություն չի կրում բաժանորդային (վերջնային) սարքավորումների անսարքությունների կամ չսերտիֆիկացված վերջնային սարքավորումների օգտագործման հետևանքով հեռախոսակապի խափանումների համար:

5.9. Բաժանորդը պատասխանատվություն է կրում բոլոր այն ֆինանսական և այլ ռիսկերի համար, որոնք կապված են Ինտերնետ ցանցում տեղադրված նյութերի, տեղեկատվության, ծառայությունների և ապրանքների/աշխատանքների

օգտագործելու արդյունքում ծագած հետևանքների հետ: «Բաժանորդի» վճարունակությունը կամ ծանրաբեռնվածությունը չի ազատում նրան սույն կետում նշված պատասխանատվությունից:

5.10.Սույն պայմանագրով նախատեսված դրույթները խախտող Կողմը պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.11 Հեռախոսակապի ծառայությունների մատուցման ընթացքում «Օպերատորի» և «Բաժանորդի» միջև առաջացած վեճերն ու տարաձայնությունները կարգավորվում են բանակցությունների միջոցով, իսկ վերջիններիս անարդյունավետության դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից, գործում է անժամկետ Կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ և ուժի մեջ է մնում այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից մեկը գրավոր չի հայտնել այն դադարեցնելու մասին: Ընդ որում, պայմանագիրը դադարեցնելու համար «Բաժանորդը» կարող է դիմել ցանկացած ժամանակ՝ այդ մասին «Օպերատորին» նախապես տեղեկացնելու և փաստացի ստացված ծառայությունների դիմաց վճարումները կատարելու դեպքում, իսկ «Օպերատորը» միայն սույն պայմանագրով, Կանոններով և օրենքով սահմանված այդ դեպքերում և պայմաններով, ինչպես նաև սույն պայմանագրի, Կանոնների պայմանները և ՀՀ գործող օրենսդրության պահանջները «Բաժանորդի» կողմից խախտելու դեպքում:

6.2 Սույն պայմանագրի առարկայի շուրջ Կողմերի միջև փաստացի ծագած հարաբերություններից կամ նախկինում կնքված համապատասխան պայմանագրից (երից), բխող ֆինանսական պարտավորությունների կատարումը Կողմերի համար պարտադիր են սույն պայմանագրի շրջանակներում:

Սույն պայմանագրի լուծումը կամ դադարումը կամ կասեցումը հիմք չէ Կողմերի ֆինանսական պարտավորությունների համապատասխանաբար դադարեցման կամ կասեցման: Ֆինանսական պարտավորությունների մասով պայմանագիրը գործում է մինչև դրանց ամբողջ ծավալով կատարումը:

6.3 Եթե տվյալ տարում Բաժանորդի համար բյուջեով նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա հաջորդող տարիներին Ծառայությունների մատուցումը կիրականացվի՝ հաջորդող տարիների միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Ծառայության մատուցման համար տվյալ տարվան հաջորդող տարում միջոցներ չնախատեսվելու դեպքում՝ այդ մասով պայմանագիրը կլուծվի:

6.4 Սույն Պայմանագրի փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքման միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մաս, բացառությամբ սույն կետով նախատեսված դեպքերի:

Եթե սույն պայմանագրում և սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ում ամրագրված գնացուցակում/սակագներում առկա է սակագին, որը հաստատված է համապատասխան լիազորություններ ունեցող պետական մարմնի և/կամ պետական լիազորություններով օժտված մարմնի կողմից և ՀՀ օրենսդրության համաձայն կարող է փոփոխվել այդ մարմնի կողմից, ապա սույն պայմանագիրը դրա անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ում և սույն պայմանագրում ամրագրված տվյալ սակագնի մասով համարվում է փոփոխված համապատասխան լիազորություններ ունեցող պետական մարմնի և/կամ պետական լիազորություններով օժտված մարմնի կողմից նոր սակագին հաստատելու և Ընկերության կողմից այն ներդնելու օրվանից:

Եթե Օպերատորը պետական մարմնի որոշման համաձայն ի կատարումն այդ որոշման պարտադրված իրականացնի փոփոխություն սույն պայմանագրում և սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ում ամրագրված գնացուցակում/սակագներում, ապա սույն պայմանագիրը դրա անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ում և սույն պայմանագրում ամրագրված տվյալ սակագնի մասով համարվում է փոփոխված Ընկերության կողմից ի կատարումն պետական մարմնի որոշման նոր սակագին հաստատելու և Ընկերության կողմից այն ներդնելու օրվանից:

*Նախատեսվում է ՀՀ կառավարության 10/01/2002թ. թիվ 40-Ն որոշման 66-րդ կետով սահմանված պահանջի կատարման նպատակով

## 7. Կողմերի իրավաբանական հասցեները

**«Օպերատոր»**

ՇԿԲ ԿՏ ԿՎԶԾ Խոշոր բիզնեսի հետ աշխատող բաժնի ղեկավար՝ Գոռ Զատիկյան

պաշտոն,անուն,ազգանուն

ք. Երևան, Ահարոնյան 2

հասցե, հեռախոս

ՀայԷկոնոմԲանկ 163004038879 հ/հ

բանկային ռեկվիզիտներ

№ 29

ստորագրություն Կ.Տ

ArmenTel Closed Joint Stock Company

**«Բաժանորդ»**

Աշխատակազմի ղեկավար՝ Միեր Մկրտումյան

(հասցե, անուն,ազգանուն

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| A | K | | 0 | 4 | 3 | 1 | 0 | 1 | 7 |

անձնագրի սերիան Լ համարը

իրավաբանական անձ՝ ՀՀ ՏԿՆ Ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ ՊԿՀ ՀՄ

հարկ վճարողի հաշվառման համարը

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 0 | 2 | 5 | 5 | 5 | 8 | 1 | 6 |

հաշվի ստորման հասցե ք. Երևան, Վարդանանց 13ա
("ԱրմենՏել" ՓԲԸ համակարգչային հաշվառման տվյալների ընդունում)

○ առձեռն ; բաժանորդների սպասարկման կետում

Էլ. փոստի հասցեն scws@netsys.am

կոնտակտային հեռախոս

ստորագրություն Կ.Տ

Հավելված 1
"02" հուլիս 2013թ. կնքված թիվ --- պայմանագրի

Տեխնիկական բնութագիր-գնացուցակ

| Ծառայության տեսակ | Քանակ | Բաժանորդային վարձ ներառյալ ԱԱՀ | Տարեկան գումար ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ |
|---|---|---|---|
| Հիմնական հեռախոսագիծ | 27 | 4 800 | 1 555 200 |
| Ուղիղ գիծ | 1 | 3 600 | 43 200 |
| Hi Line անսահ. 1024/2048 Մեգա | 1 | 8 000 | 96 000 |
| Ընդամենը | | | 1 694 400 |

«Օպերատոր»

ՇԿԲ ԿՏ ԿՎԶԾ Խոշոր բիզնեսի հետ աշխատող բաժնի ղեկավար՝ Գոռ Զատիկյան

պաշտոն,անուն,ազգանուն

ք. Երևան, Աճառյան 2

հասցե, հեռախոս

Հայէկոնոմբանկ 163004038879 հ/հ

բանկային ռեկվիզիտներ

Հայաստանի Հանրապետություն Երևան ... ՓԲԸ
Աճառյան 2
Ajaronyan 2

կնիքի տեղը Կ.Տ

«Բաժանորդ»

Աշխատակազմի ղեկավար՝ Միհր Մկրտումյան
(հասցե, անուն,ազգանուն)

| A | K | | 0 | 4 | 3 | 1 | 0 | 1 | 7 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|

իրավաբանական անձ՝ ՀՀ ՏԿՆ Ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ ՊԿԿ ՀՄ

հարկ վճարողի հաշվառման համարը

| 0 | 2 | 5 | 5 | 5 | 8 | 1 | 6 |
|---|---|---|---|---|---|---|---|

հաշվի առաքման հասցե [illegible]
("ԱրմենՏել" ՓԲԸ համապատասխան ներկայացուցչության ղեկավարով)
Օ առձեռն , բաժանորդների սպասարկման կետում
Էլ. փոստի հասցե [illegible]
կոնտակտային հեռախոս
կնիքի տեղը Կ.Տ

02.07.2013թ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 4

կից րիվ պայմանագրի

| N | Պայմանագրի համար<br>BAN կոդ | Տեխնիկական միջոցներ<br>Հեռախոսահամար, ալիքի գիծ, միացման գիծ և այլ կապի միջոցներ | Ամսական բաժանորդային վարձ, (առանց ԱԱՀ) դրամ | ԱԱՀ | Ընդամենը ամսական վարձը (ԱԱՀ-ով) դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 112765867 | 7410567033 | 4000 | 800 | 4800 |
| 2 | | 7410547287 | 4000 | 800 | 4800 |
| 3 | | 7410547284 | 4000 | 800 | 4800 |
| 4 | | 7410547283 | 4000 | 800 | 4800 |
| 5 | | 7410547281 | 4000 | 800 | 4800 |
| 6 | | 7410543713 | 4000 | 800 | 4800 |
| 7 | | 7410543539 | 4000 | 800 | 4800 |
| 8 | | 7410541288 | 4000 | 800 | 4800 |
| 9 | | 7410540909 | 4000 | 800 | 4800 |
| 10 | | 7410540763 | 4000 | 800 | 4800 |
| 11 | | 7410540762 | 4000 | 800 | 4800 |
| 12 | | 7410540760 | 4000 | 800 | 4800 |
| 13 | | 7410540733 | 4000 | 800 | 4800 |
| 14 | | 7410540633 | 4000 | 800 | 4800 |
| 15 | | 7410540613 | 4000 | 800 | 4800 |
| 16 | | 7410540603 | 4000 | 800 | 4800 |
| 17 | | 7410540592 | 4000 | 800 | 4800 |
| 18 | | 7410540580 | 4000 | 800 | 4800 |
| 19 | | 7410540543 | 4000 | 800 | 4800 |
| 20 | | 7410540413 | 4000 | 800 | 4800 |
| 21 | | 7410540326 | 4000 | 800 | 4800 |
| 22 | | 7410540277 | 4000 | 800 | 4800 |
| 23 | | 7410540264 | 4000 | 800 | 4800 |
| 24 | | 7410540229 | 4000 | 800 | 4800 |
| 25 | | 7410540135 | 4000 | 800 | 4800 |
| 26 | | 7410529606 | 4000 | 800 | 4800 |
| 27 | | 7400339747 | 6400 | 1600 | 8000 |
| 28 | | 7410012496 | 3000 | 600 | 3600 |
| 29 | 112782724 | 7410651654 | 4000 | 800 | 4800 |
| | | | | 23800 | 124800 |

ՕՊԵՐԱՏՈՐ՝
«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ
ԾԿՄ ԿՏ ԿԿԶՏ խոշոր բիզնեսի հետ աշխատող բաժին

Բաժնի ղեկավար՝ Գոռ Զատիկյան

Արմեն Արզումանյան

Կ.Տ.

ԲԱԺԱՆՈՐԴ՝
ՀՀ ԿԱ Օրգանի ... պետական կոմիտեի աշխատակազմ ՊՈԱԿ ՀՄ

Աշխատակազմի ղեկավար՝ Մհեր Մելքոնյան

Արման Արզումանյան

Մատակարար...

Կ.Տ.

armentel 112782724

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ~~011069356~~ [illegible]

«ԱրմենՏել» ՓԲԸ կողմից բաժանորդին մատուցվող հեռախոսակապի ծառայությունների

«20» 06 2007թ.

Հեռահաղորդակցության օպերատոր «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գործում է համաձայն ՀՀ կապի նախարարության կողմից տրված թիվ 60 արտոնագրի (լիցենզիայի), այսուհետ՝ «Օպերատոր» «Նոր-Նորք» տեղամաս (63,64,65,66) ՀՀ Երևանի տարածք

(նշել մարզը, շրջանը, քաղաքը)

դեմս լիազորված անձ՝ Խաչատուր Խաչատրյան Մենեջեր մի կողմից, և

(անուն, ազգանուն, պաշտոնը)

մյուս կողմից «Բաժանորդ» ի դեմս [illegible]

(պաշտոնը, անուն, ազգանուն կամ քաղաքացու անուն, ազգանուն)

[illegible] 125

(իրավաբանական անձի հասցեն, քաղաքացու գրանցման վայրը)

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

«Օպերատորը» պարտավորվում է

ՀՀ Երևանի տարածք «Նոր-Նորք» տեղամաս (63,64,65,66)

(«ԱրմենՏելի» տարածքային, շրջանային)

ռախսային ցանցի «Բաժանորդին» հատկացված հեռախոսահամարով (հեռախոսահամարներով) [illegible]

(ըստ հավելվածի՝ հեռախոսի համար, կապուղիներ, միացնող գիծ, ուղիղ գիծ, ISDN ցանցային տերմինալ ETMOD սարքավորում և այլ կապի միջոցներ) մատուցել հեռախոսակապի ծառայություններ, իսկ «Բաժանորդը» պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում վճարել մատուցված հեռախոսակապի ծառայությունների համար:

2. Վճարման կարգը և ժամկետները

2.1 Մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է ըստ հաշվի(ների), բաժանորդին սպասարկող «Օպերատորի» գործառնական դրամարկղերում Հայփոստի, Հայէկոնոմբանկի, Հայխնայբանկի (և այլն) բաժանմունքներում, ինչպես նաև «Օպերատորի» սարանցիկ ________ հաշվին:

2.2 «Օպերատորի» կողմից մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց հաշիվները «Բաժանորդին» ներկայացվում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև 20-ը ներառյալ:

2.3 «Օպերատորի» կողմից մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց հաշվարկված գումարները «Բաժանորդի» կողմից ենթակա են վճարման հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ:

3. «Օպերատորի» պարտականությունները և իրավունքները

3.1 «Օպերատորը» պարտավոր է՝

3.1.1 Ելնելով գործող տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորություններից ապահովել կայուն և անխափան հեռախոսակապի ծառայություններ:

3.1.2 Իր ցանցի սահմաններում ապահովել հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը:

3.1.3 Սեփական նախաձեռնությամբ կամ «Բաժանորդի» հայտով վերացնել առաջացած կայանային և գծակաբելային վնասվածքները Հեռախոսակապի ծառայությունների մատուցման Կանոններով սահմանված ժամկետներում:

3.1.4 Ոչ «Բաժանորդի» մեղքով հեռախոսակապի վնասվածքների, հեռախոսացանցերում տեղի ունեցած վթարների դեպքերում ամրագրել խափանման օրը, ժամը և կատարել բաժանորդային վարձի պակասեցում յուրաքանչյուր չաշխատած օրվա համար:

3.1.5 Զանգվածային լրատվության միջոցներով նախօրոք տեղեկացնել «Բաժանորդին» նոր սակագների կիրառման պահից 30 օր առաջ: Այս դրույթը կիրառելու պարտավորությունից «Օպերատորը» ազատվում է, երբ համապատասխան իրավական ակտի պաշտոնական հրապարակման օրվանից հետո երեսնօրյա ժամկետի պահպանումը հնարավոր չէ:

3.2 «Օպերատորը» իրավունք ունի՝

3.2.1 Անջատել Բաժանորդային հեռախոսագիծը (գծերը), հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ հեռախոսակապի ծառայությունների դիմաց վճարումները չկատարելու դեպքում: Հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող 2-րդ ամսվա ընթացքում հեռախոսակապի

…ությունների առկա պարտքերի մարման դեպքում անջատված բաժանորդային գծերը ենթակա են …ացման:

3.2.2 Հանել սույն պայմանագրի 3.2.1 կետով սահմանված ժամկետում անջատված բաժանորդային գծերը, հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող 2-րդ ամսվա մինչև վերջին օրը ներառյալ հեռախոսակապի ծառայությունների դիմաց պարտքերը չվճարելու դեպքում և դադարեցնել պայմանագրի գործողությունը՝ հանման օրվանից սկսած երկու ամսվա ընթացքում պահպանելով տեխնիկական տվյալները և վերականգնման հնարավորությունը:

3.2.3 Հեռախոսահամարի հանման օրվանից 2 (երկու) ամսվա ընթացքում, «Բաժանորդի» կողմից պարտքերը չմարելու և վերականգնման միանվագ ծառայության վարձը չմուծելու դեպքում, հեռախոսակապի ծառայությունների մատուցումը (նոր տեղադրում) իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ նախկին պարտքերը մարելու պայմանով:

3.2.4 Մինչև պայմանագրի դադարեցումը հաշվարկել և գանձել բաժանորդային վարձը:

3.2.5 «Բաժանորդից» պահանջել վնասների փոխհատուցում՝ «Օպերատորի» բացառիկ իրավունքը հանդիսացող հեռախոսակապի ծառայությունների ելքային և մուտքային զանգերի բաշխման, Ինտերնետային ցանցի միջոցով հեռախոսակապի հաստատման (VoIP) դեպքերում՝ ելքային և մուտքային զանգերի գումարների չափով:

3.2.6 Անմիջապես անջատել բաժանորդային հեռախոսահամարը (գծերը) և խզել բաժանորդային պայմանագիրը, եթե

- «Բաժանորդին» տրամադրված հեռախոսագիծը (գծերը), առանց լիազորված մարմնի լիցենզիայի և առանց «Օպերատորի» հետ համաձայնեցման օգտագործվում է շահույթ ստանալու նպատակով:
- «Բաժանորդին» տրամադրված կապի միջոցները օգտագործվում են ՀՀ կապի նախարարության կողմից տրված թիվ 60 արտոնագրով (լիցենզիա) սահմանված «Օպերատորի» բացառիկ իրավունքը հանդիսացող հեռախոսակապի ծառայությունների ելքային և մուտքային զանգերի բաշխման, Ինտերնետային ցանցի միջոցով հեռախոսակապի հաստատման (VoIP), միջազգային զանգերի անօրինական բաշխման նպատակներով, որի արդյունքում կարող է նյութական վնաս պատճառել «Օպերատորին»:

## 4. «Բաժանորդի» պարտականությունները և իրավունքները

4.1 «Բաժանորդը» պարտավոր է՝

4.1.1 Մատուցված հեռախոսակապի ծառայությունների համար վճարումները կատարել տրվ ծավալով, ուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ:

4.1.2 «Օպերատորին» տեղեկացնել բաժանորդային սարքավորման ծնի (տեսակի) մասին և դրանք պահել սարքին վիճակում:

4.1.3 Զուգտակ սխեմայով հեռախոսակապից օգտվելիս նույն բաժանորդային գիծը օգտագործող Բաժանորդի համար չստեղծել բարդություններ:

4.1.4 Պայմանագրում նշված հեռախոսաֆիկացված տարածքի նկատմամբ իրավունք ունեցող անձի (քաղաքացի կամ կազմակերպություն) փոփոխության, եթե բաժանորդը կազմակերպություն է անվանափոխության դեպքերում տեղյակ պահել «Օպերատորին»:

4.1.5 Վճարել մատուցված հեռախոսակապի ծառայությունների համար նաև այն դեպքում, երբ բաժանորդային (վերջնային) սարքավորումը օգտագործվել է այլ անձանց կողմից, անկախ այն բանից համաձայնեցվել է «Բաժանորդի» հետ, թե ոչ:

4.1.6 ISDN գծերով մատուցվող ծառայություններից հրաժարվելու կամ «Օպերատորի» նախաձեռնությամբ հեռախոսակապի ծառայությունների մատուցման պայմանագրի գործողության դադարեցման դեպքերում ետ վերադարձնել «Օպերատորի» սեփականությունը հանդիսացող ցանցային տերմինալ՝ NETMOD սարքավորում(ները) սարքին վիճակում:

4.1.7 Չփոխանցել սույն պայմանագրի 1-ին բաժնում նշված կապի միջոցները այլ անձանց (վարձակալության, ենթավարձակալության պայմանագրերով):

4.2 «Բաժանորդն» իրավունք ունի՝

4.2.1 Օգտվելու ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով հեռախոսակապի ծառայությունների ոլորտում սահմանված արտոնություններից:

4.2.2 Պահանջելու հեռախոսակապի ծառայությունների վճարման վերահաշվարկ կամ այդ ծառայություններից հետագայում չօգտվելու դեպքում՝ վճարված դրամական միջոցների վերադարձ:

4.2.3 «Բաժանորդն» ունի ՀՀ օրենսդրությամբ և «Հեռախոսակապի ծառայությունների մատուցման կանոններով» նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

## 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 «Օպերատորը» օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում «Բաժանորդի» հանդեպ պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, հեռախոսակապի խափանումները վերացնելու ժամկետները խախտելու համար:

5.2 Հեռախոսակապի ծառայությունների մատուցման ժամկետները խախտելու դեպքում «Բաժանորդն»

ինչպես նաև սույն պայմանագրի 3.2.2 և 3.2.6 կետերի՝ «Բաժանորդի» կողմից խախտման դեպքում:

6.2 Սույն պայմանագրի առարկայի շուրջ Կողմերի միջև նախկինում կնքված համապատասխան պայմանագրից (երից) բխող ֆինանսական պարտավորությունների կատարումը Կողմերի համար պարտադիր է սույն պայմանագրի շրջանակներում:

7. Կողմերի իրավաբանական հասցեները

«Օպերատոր»

Մենեջեր Խաչատուր Խաչատրյան

(պաշտոն, անուն, ազգանուն)

"ԱՐՄԵՆՏԵԼ" ՓԲԸ, Ահարոնյան 2

հասցե,հեռախոս

...Սեբաստիայի 1

գործունեության հասցե

~~163078100654~~ Ա/Հ 163004038819

"...Էկոնոմբանկ" Խորհրդային մասնաճյուղ

Բաժ.վարձի գծով բանկային ռեկվիզիտներ

001125707002 Ա/Հ

"HSBC" Հայաստանի բանկ

ՄՄԽ վարձի գծով բանկային ռեկվիզիտներ

հեռախոս 54-92-93

ստորագրություն

Կ.Տ.

02500052

«Բաժանորդ»

քաղաքացի

(հասցե ,անուն, ազգանուն, ստորագրություն )

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | |

անձնագրի սերիան և համարը

իրավաբանական անձ ...

Յափոխ անվանումը

...

իրավաբանական և գործունեության հասցե

հարկ վճարողի հաշվառման համարը 02355816

... 1 ... 900011564105

բանկային տվյալներ

...

լիազորված անձի պաշտոն, անուն, ազգանուն

e-mail

ստորագրություն

Կ.Տ.

# Լրացուցիչ համաձայնագիր N 1

«ԱրմենՏել» ՓԲԸ և « ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի» միջև

06.08.2012-ին կնքված թիվ 112765867 պայմանագրի

ք. Երևան «14» «օգոստոս» 2015թ.

«Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը» ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Մ.Մկրտումյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա մի կողմից, և «Արմենտել» ՓԲԸ-ն, ի դեմս լիազորված անձ՝ Գ.Զատիկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան

Հաշվի առնելով երկու ֆիքսված հեռախոսահամարների ծնոքբերման անհրաժեշտությունը՝ կողմերը որոշեցին՝

1.1 ավելացնել ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի ֆիքսված հեռախոսահամարները 2 նոր համարով, որի միանվագ վճարը՝ ներառյալ ԱԱՀ-ն կազմում է 4800 ՀՀ դրամ (2x2400)

1.2 ավելացված 2 հեռախոսահամարների ամսեկան բաժանորդային վարձի վճարումն իրականացնել համաձայն սույն համաձայնագրին կից հավելվածի:

## Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ պայմանագրով ստանձնած իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջ, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի հավելվածը բաղկացած է 1 էջից և հանդիսանում են սույն համաձայնագրի բաղկացուցիչ մաս: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**«ԱրմենՏել» ՓԲԸ**

Լիցենզիա № 60

**Իրավաբանական հասցեն՝**

Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան, Աճառյան 2

ՀՎՀՀ 02500052

Լիազորված անձ՝

Գոռ Չատրյան

Կ.Տ.

**Հիմնարկը՝**

« ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե»

**Իրավաբանական հասցե՝**

Հայաստանի Հանրապետություն.

Վարդանանց 13ա

ՀՎՀՀ 02555816

աշխատակազմի ղեկավար՝

Մ. Մկրտումյան

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ Կից թիվ 112765867 պայմանագրի

«14» 08 2015

| N | Տեղադրման հասցե | Տեխնիկական միջոցներ | | Տրամադրման միանվագ վարձ ԱԱՀ-ով, դրամ | | Ամսեկան բաժանորդային վարձ (առանց ԱԱՀ) դրամ | | ԱԱՀ | Ընդհամենը ամսական վարձը (ԱԱՀ-ով) դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հեռախոսային | Ուղիղ գիծ | Հեռախոսային | Ուղիղ գիծ | Հեռախոսային | Ուղիղ գիծ | | |
| 1 | ք. Երևան, Վարդանանց 13ա | 010-540614 | | 2400 | | 4000 | | 800 | 4800 |
| 2 | ք. Երևան, Վարդանանց 13ա | 010-540615 | | 2400 | | 4000 | | 800 | 4800 |
| | **Ընդամենը՝** | 2 | | 4,800 | | 8,000 | | 1,600 | 9,600 |

« ՕՊԵՐԱՏՈՐ»

«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ

ԿՏ, ԿՎԾ, ԽԲԱԲ

Վաճառքի ավագ մասնագետ

Կ.Տ Ն. Հարությունյան

«ԲԱԺԱՆՈՐԴ»

ՀՀ ԳՆ Ջրային տնտեսության պետական կոմիտե

աշխատակազմի ղեկավար

Կ.Տ Մ. Միկոյան

## Համաձայնագիր N 2

ք. Երևան «24» «դեկտեմբերի» 2015թ.

«Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը» ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Գ.Սարոյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Բաժանորդ» մի կողմից, և «Արմենտել' ՓԲԸ-ն, ի դեմս լիազորված անձ' Գ. Չատիկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Օպերատոր» մյուս կողմից, միասին «Կողմեր», կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին

1. Սույն համաձայնագրով Կողմերը որոշեցին' 06.08.2012-ին կնքված հեռախոսակապի ծառայությունների մատուցման թիվ 112765867 պայմանագրում ավելացնել նոր կետեր հետևյալ բովանդակությամբ'

<<1.1 ՀՀ ԳՆ Ջրային տնտեսության պետական կոմիտեի ֆիքսված հեռախոսահամարները ավելացնել 1 նոր համարով, որի միանվագ վճարը' (ներառյալ ԱԱՀ-ն) կազմում է 2400 ՀՀ դրամ (1x2400) և դրա ամսեկան բաժանորդային վարձի վճարումն իրականացնել համաձայն սույն համաձայնագրին կից հավելվածի:

1.2 Օպերատորը պարտավորվում է Բաժանորդին մատուցել նաև շարժական բջջային կապի ծառայություններ' համաձայն սույն համաձայնագրի անբաժանելի մասը համարվող " Բջջային կապի ծառայությունների մատուցման պայմանների այսուհետ "Պայմաններ":

1.3 Բաժանորդը երաշխավորում է, որ ունի համապատասխան ֆինանսական միջոցներ' բյուջե, սույն համաձայնագրի շրջանակում մատուցված ֆիքսված և բջջային կապի ծառայությունների վճարման համար:

1.4 Բաժանորդը պարտավորվում է մատուցված հեռախոսային կապի բոլոր ծառայությունների համար կատարել վճարումներ 06.08.2012թ. կնքված թիվ 112765867 պայմանագրով և "Բջջային կապի ծառայությունների մատուցման պայմաններով" սահմանված կարգով և ժամկետներում:>>

2. Սույն համաձայնագիրը և դրա անբաժանելի մասը համարվող " Պայմանները" ուժի մեջ են մտնում ստորագրման պահից:

3. Սույն համաձայնագիրը և" Պայմանները" կնքված են 2 օրինակից , ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի և "Պայմանների" մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«ԱրմենՏել» ՓԲԸ

Լիցենզիա № 60

**Իրավաբանական հասցեն՝**

Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան, Ահարոնյան 2

ՀՎՀՀ 02500052

Լիցորված անձ՝

Գ. Զաքարյան

Կ.Տ.

Հիմնարկը՝

« ՀՀ ԳՆ Ջրային տնտեսությա պետական կոմիտե»

**Իրավաբանական հասցե՝**

Հայաստանի Հանրապետություն,

Վարդանանց 13ա

ՀՎՀՀ 02555816

աշխատակազմի ղեկավար՝

Գ. Սարոյան

Կ.Տ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 հոկտեմբերի 2016 թվականի N 1038-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1516-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածի՝

ա. 6-րդ կետից հանել «և Ջրային տնտեսության պետական կոմիտեից» բառերը,

բ. 7-րդ կետի «ժդ» և «ժե» ենթակետերն ուժը կորցրած ճանաչել.

2) որոշման N 2 հավելվածի «III. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում պետական մարմիններ» բաժնից հանել «Ջրային տնտեսության պետական կոմիտե» բառերը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ վերանվանելու, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 654-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման վերնագրում և ամբողջ տեքստում «էներգետիկայի և բնական պաշարների» բառերը և իրենց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների» բառերով և իրենց համապատասխան հոլովաձևերով.

2) որոշման N 1 հավելվածի՝

ա. 6-րդ կետը «աշխատակազմից,» բառից հետո լրացնել «նախարարության կառավարման ոլորտում գործող Ջրային տնտեսության պետական կոմիտեից» բառերով,

բ. 7-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16-րդ և 17-րդ ենթակետերով.

«16) պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման և անվտանգ օգտագործման ապահովումը.

17) ջրային համակարգերի կառավարման քաղաքականության մշակման և իրականացման ապահովումը:».

3) որոշման N 2 հավելվածը «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ բաժնով.

**«III. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կառավարման ոլորտում պետական մարմիններ**

Ջրային տնտեսության պետական կոմիտե»:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» N 1400-Ն որոշման վերնագրում և ամբողջ տեքստում «գյուղատնտեսության» բառը և իր համապատասխան հոլովաձևերը փոխարինել «էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների» բառերով և իրենց համապատասխան հոլովաձևերով:

4. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում՝

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հետ համատեղ, սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի պահպանման ծախսերի վերաբերյալ առաջարկություն.

2) ստեղծել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի գույքի փոխանցման հանձնաժողով՝ վերջինիս կազմում ներգրավելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության, Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության ներկայացուցիչներին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ** **Կ. Կարապետյան**

2016 թ. հոկտեմբերի 14
Երևան